



ԲՈՐԻՍ ԿՈՌՆԻԼՈՎ

**ԹԵ ԻՆՉՊԵՍ ՄԵՂՐԻՑ ԱՐՋԻ  
ԱՏԱՄՆԵՐՆ ՍԿՍԵՑԻՆ ՑԱԿԵԼ**

*ԻԿԱՊՐԱՆԻ 4 ԹԻՍՎԱԿԻ*

ՊԵՏՅՐԱՏ ՅԵՐԵՎԱՆ 1936

891.715

Կ-74

ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՏԱՐԻՔԻ ՅԵՐԵՆԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ



4074  
41836



Քնիր, տղաս, ինչ ես լալիս,  
այգիներով արջն ե գալիս:  
Արջը մեզը ե՞րևում բաղցր,  
հյութալի ու առատ, թանձր:



Իսկ բաղնիսի յետևու ևմ  
մեղվանոց ե յերևում,  
փեթակները չորս վտառով,  
շեկ-ձղնոտե գլխարկով,  
մեղուներն ելփափուկ, կարգին  
սուս բազմածին ծաղիկներին:



3849  
1816



Պատ. խմբ. Հ. Հայրապետյան

Տեխն. խմբ. Մ. Ճիմիրալյան

Թարգմ. Հ. Տ.-Ավագյան

Հրատարակ. № 3463. Հանձնված ե արտադրության 25/II 1936 թ. Ստորագրված ե  
տպելու 29/III 1936 թ. Ստատֆորմատ Ա5 — 148x210.

Крайлит № (0-11456. Тираж 500). Заказ №949. Типография им. Стачки 1902 г. АЧКПТ  
Ростов на-Дону. ул. Энгельса № 11



Այ, մոտեցավ փեթակներին,  
բերանը լայն բաց արած,  
ու գուռ տարով իր թաթերին  
դուրս հանեց մի մեղրահաց:

Յեվ սև թաթով  
կոխեց թափով  
րազցր մեղրը իր բերանը:  
Յեվ նա, սաստիկ շտապելով,  
կշտոտում է մրթմրթալով  
գույի թաթը հաստ ու դողդոջ  
թրջվել է մեղրով ամբողջ:  
Պան, հերիք ե՛ - ծծում, ծծում,  
տնքտնքալով թաթն է կրծում,  
յերեվի նա կերավ կես փուլթ,  
բայց և մի փուլթ կլինի անշուշտ:



Սաստիկ հոգնած կպառկի  
բրդոտ արջը բաղցրակեր:  
Հիմա շտապ պիտ փախչել,  
բանի յերջիկ չեն դարձրել:  
Բայց դե պիտի իրեն համար  
փեթակ տանի իբրև պաշար:

Իսկ ծուլ շունը քնած է պինդ,  
գյուղն է քնել գետի ափին:  
Քար ու թփեր վոտին տալով,  
մթան միջին մրթմրթալով,  
թփթփացրեց մինչև վորջը  
բրդոտ սարը — թոփալ արջը:  
Հիմա նա յել  
կուզի քնել:





Քնիր, բալաս, ընիր, տղաս,  
 արջը մոտ է, հերիք գոռաս:  
 Ի այց ցավեցրեց բաղցը մեղրը  
 ազան արջի ատամները:



Յավը մտավ ինչպես ցեց,  
 նվազրեց,  
 ծովի նման ալեկոծեց,  
 հարվածեց,  
 ատամն ամբողջ վերից ցած  
 սվավազրեց  
 և պինդ ցնցեց,  
 մի կողմ ծռեց թուռն ուռած:  
 Ու փաթաթեց հաստ խսիրով,  
 կարծես առջը դարձավ խռով...




Արջը արջ էր, արջի նման,  
 հիմի դարձավ ինչի նման,  
 թուռը կապած-կապկապած,  
 ինքն էլ տգեղ, կատաղած:

Յեղեմսիքը շուրջպատ բռնած,  
 նվում է պինդ թուռը ուռած...  
 Գցեց մի տեղ մեղր ու փեթակ  
 վտաբերի տակ...

Ել ինչ բաղցը, ել ինչ բուն  
 արջի համար մորմորուն:

Քնիր տղաս, ուշ է արլւեն,  
 ատամներդ կցավեն:





Գնաց արջը,  
 դեպի վորջը,  
 փայթփորիկին գտավ բաջը:  
 Կարմիր թավշյա գդակով,  
 նուրբ, սևաթույր բաճկոնով,  
 պճնամուկն է թռչնոց միջին,  
 մի ճիճուլ յեղ բռնած ձեռքին:  
 Փայթփորն ունի սրած բիթ,  
 լաքով պատած,  
 ուղղաձիգ,  
 յեռման ջրով լվացված,  
 կանաչ խոտով չորացրած:



Փայտփորիկը շատ բան գիտի —  
 ասաց արջին, վոր նստի,  
 յեվ խստորեն հարցնուժ է նա.  
 «Արջուկ, ինչդ է ցավուժ, ասա,  
 — ատամդ,  
 վորը»:  
 Արջին դիմեց եսպես հարցով  
 և ահագին սուր կտուցով  
 ամուր բռնեց ատամն արջի:  
 Քաշեց ուժով, մի անգամից  
 հանեց ատամն իր արմատից:





Վոնց թե, արջը ատամ չունի՞...  
տեսնենք դա ինչ վնաս ունի—  
դու վո՛չ կովիր, վո՛չ կծիր,  
գազաններից վախեցիր,  
և՛ գայլից, և՛  
նապաստակից,  
կամ խորամանկ ժանտաքիսից:



Իսկի լավ չի դատարկ բերան...  
Խլուրդին է արջը փնտրում:  
Խլուրդը մոտ յեկավ նրան,  
նայեց, տնտղեց արջի բերան:  
Ողբ ծանր է արջի բերնում  
նոր ատամ ել չի յերևում:  
Խլուրդն արջին ասաց—«արժի՛,  
վոր մի ատամ դնենք վուսկի»:





Ինչո՞ւ տղաս, չես բնոււմ  
չարացած եւ արջը մթնոււմ,  
պատրաստ եւ նա ամեն

բանի,

վոր մի տեղից վոսկի հանի:

Նլուրդն ասաց

— «Վոր սպասե՛ս,

մի բիշ հետո, սիրելիս,

կես փուլթ վոսկի կգտնեմ

յես

հողի խորքը փորելիս»:

Յե՛վ խլուրդը ասպատավոր

հողն եւ փորում կարծես բահով,

մինչ յերեկո դաշտերում

հողում վոսկի յե փնտռում:

Ինչ վոր տեղում բոստանի մեջ

վոսկի գտան ծանր ու մեծ:



Քնիր տղաս, ի՞նչ ես լալիս,

ուրախ-ուրախ արջն եւ գալիս:

Նոր ատամով շրջում անա,

արջն եւ պարում յերիտասարդ,


յե՛վ վառվում եւ բերնում հիմա

վոսկի ատամն ուրախ զվարթ:





Քնիր տղաս, մի գոռա,  
 քուն և մտնում արջն անա:  
 Կեչիները քնեցին:  
 Դաշտ դուրս յեկազ հաստ խլուրդը  
 քնեց ընում իր մթին:  
 Շրմփացրեց քնկոտ ձուկը:  
 Փայտփորները քիթը մաքրել,  
 քուն են մտել:  
 Քնած են վողջ:  
 Ժամացույցն և միայն հսկում  
 գիշերը վողջ,  
 ու չխախտում:



Ու մթնում և,  
 ծանրանում և  
 յերկրի վրա սև գիշերը:  
 Խելոք արջը այժմ սիրով  
 լավ մաքրում և ատամները,  
 մեջը լցնում  
 կեչու ձյուլթ,  
 Յեվ ել մեղր չի գողանում:





3783

ՀԻՆԷ՛ 30 ԿՈՊ.

БОРИС КОРНИЛОВ

КАК ОТ МЕДА У МЕДВЕДЯ  
ЗУБЫ НАЧАЛИ БОЛЕТЬ

РИСУНКИ К. РОТОВА

АРМЕНИГИЗ - ЭРИВАНЬ

